



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17022

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հուլիսի 27-ի թիվ 119-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/70-Ա

**ՓԱՏՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Սարգսյանի, **խորհրդի անդամներ՝** Հարություն Հարությունյանի, Հրանտ Անանյանի, Կարեն Մեժլումյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

27.07.2017թ-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 305) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) կողմից (նախագահող դատավոր Վ. Գրիգորյան) Պալատ է ուղղվել Դիմողի կողմից 22.03.2017թ-ին կայացված «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում**):

Որոշման համաձայն Դիմողի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով 22.03.2017թ-ի դատական նիստի ընթացքում, ամբաստանյալ Ե. Արզիսայի շահերի պաշտպան Կրոմվել Գրիգորյանն ինքնաբացարկի միջնորդություն է հայտնել նախագահող դատավորի դեմ, որի կապակցությամբ դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ, որտեղից վերադառնալուց և կայացված որոշումը հրապարակելուց հետո պարզել է, որ առանց նախագահող դատավորի թույլտվության, առանց դատավարության մյուս մասնակիցներին տեղեկացնելու, պաշտպան Կրոմվել Գրիգորյանը լքել է դատական նիստերի դահլիճը, անհարգալից վերաբերմունք դրսևորել ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ և խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքն, որի պատճառով դատարան հրավիրված վկաները չեն հարցաքննվել և նիստը հետաձգվել է:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ

հողվածի 1-ին մասը, 314.1-րդ հողվածի 1-ին և 7-րդ մասերը, նշել է, որ գործի դատական քննության ընթացքում ամբաստանյալ Ե.Արզիևայի շահերի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը 22.03.2017թ. դատական նիստի ընթացքում ինքնական լքել է դատական նիստերի դահլիճը և չկատարելով ամբաստանյալի օրինական շահերը ներկայացնելու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով նրան իրավական օգնություն ցույց տալու իր դատավարական պարտականությունը՝ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ, որով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը:

Դատարանը «Դատական սանկցիա կիրառելու մասին» 22.03.2017թ. որոշմամբ որոշել է. «Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով ամբաստանյալ Եվգենիա Վիլիկի Արզիևայի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա և նրան պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 13.04.2017թ. թիվ 98-Ա/ԿԳ-17022 որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

18.04.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը 23.05.2017թ-ի գրությանը կից ներկայացրել է թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով 22.03.2017թ-ի դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչը:

Գործի նախապատրաստման փուլում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, ինչպես նաև չի ներկայացրել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը իր 17.05.2017թ-ի գրավոր բացատրությամբ հայտնել է, որ Դատարանի որոշման հետևությունները իրականությանը չեն համապատասխանում, ինչպես նաև հայտնել է, որ 22.03.2017թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում չի կայացվել, բացի այդ դատական սանկցիա կիրառելու որոշում կայացնելու նպատակով

Դատարանը խորհրդակցական սենյակ չի հեռացել:

Պատասխանողը գտել է, որ Դատարանի 22.03.2017 թվականի «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների ակնհայտ և կոպիտ խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա Պատասխանողը գտել է, որ իր արարքում առկա չէ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում, հետևապես այդ հիմքով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին Պատասխանողը ներկայացել է և տվել է նույնաբովանդակ բացատրություն:

3.3. Վկաների ցուցմունքները.

Կարգապահական վարույթին վկաներ չեն հրավիրվել կամ այլ կերպ մասնակցել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, կազմել է եզրակացություն, ըստ որի.

«(...) դատարանն առանձին ակտի ձևով, առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, կայացրել է որոշում»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

16.06.2017թ. գործը հանձնվել է խորհրդին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հուլիսի 27-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.4

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները (ինչպես նախապատրաստողի ունեցած, այնպես էլ խորհրդի քննության ժամանակ ներկայացված), հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. թիվ ԵԷԴ/0092/01/15 քրեական գործով 22.03.2017թ-ի դատական նիստի ժամանակ Դիմողը որոշում է կայացրել Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին, *ինչը հաստատվում է 22.03.2017թ-ի դատական նիստի ձայնագրատման կրիչով:*

2. Նշված Որոշումը Դիմողը կայացրել է առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, *ինչը հաստատվում է 22.03.2017թ-ի դատական նիստի ձայնագրառման կրիչով և Պատասխանողի բացատրությամբ:*
3. Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը կայացվել է առանձին ակտի տեսքով, *ինչը հաստատվում է 22.03.2017թ-ի որոշման առկայությամբ:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 27.07.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Կրոմվել Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 03.11.1997թ-ից: 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 19 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (18 ավարտված և 1 ընթացիկ վարույթ):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ 13.04.2017 թվականին հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ Օրենսգիրք**) 314¹-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները. (...) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով (...) Փաստաբանական պալատ դիմելը:

Օրենսգրքի 7-րդ մասի համաձայն՝ (...) Փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի **առանձին որոշմամբ**, իսկ նշված դատական սանկցիան **պարտադիր հիմք է** (...) փաստաբանի նկատմամբ **կարգապահական վարույթ հարուցելու համար:**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է սույն օրենքով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու **առիթներն** են պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին **դատարանի սանկցիան**:

Վերը նշված նորմերի պահանջներից պարզ է դառնում, որ ՀՀ փաստաբանների պալատին ուղղված դատական սանկցիա կիրառելու մասին որոշման առկայությունը (անկախ օրենքի պահանջների պահպանմամբ կայացված լինելու կամ չլինելու հանգամանքից), պարտադիր է դարձնում փաստաբանների պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը:

Օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն.

«1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է **խորհրդակցական սենյակում և** դրանք պետք է շարադրված լինեն **առանձին փաստաթղթերի ձևով՝** ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. **Մյուս բոլոր որոշումները** դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել **կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում** դատավորների խորհրդակցելուց հետո՝ **որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ**»:

Վերլուծելով վերը նշված նորմի պահանջները, Խորհուրդը արձանագրում է, որ դատարանի կողմից որոշումներ կայացնելու համար օրենսդիրը նախատեսել է միմյանցից տարբերվող երկու ձևեր.

1. Դատարանը, օրենքով կոնկրետ չնախատեսված դեպքերում, իրավունք ունի որոշում կայացնել առանց խորհրդակցական սենյակ հեռանալու և այդ դեպքում դատարանի որոշումները մտցվում են դատական նիստի արձանագրության մեջ,
2. Դատարանը, օրենքով նախատեսված որոշումները պարտավոր է, իսկ դրանում կոնկրետ չնախատեսված որոշումները, իրավունք ունի կայացնել առանձին փաստաթղթի ձևով, սակայն այդ դեպքում պարտադիր պայման է հանդիսանում այդպիսի որոշումը խորհրդակցական սենյակում կայացնելը:

Տվյալ դեպքում, Խորհուրդը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Դատարանը 22.03.2017թ-ի դատական նիստի ընթացքում «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը չի կայացրել խորհրդակցական սենյակում: Որոշումը Դատարանը կայացրել է տեղում՝ արձանագրային կարգով, սակայն առանձին ակտի ձևով որոշում է հղել ՀՀ փաստաբանների պալատին:

Այնինչ, Օրենսգրքի 314¹-րդ 7-րդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի **առանձին որոշմամբ**, ինչը, հաշվի առնելով նույն Օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումներ կայացնելու կարգը, պարտավորեցնում է դատարանին որոշումը կայացնել խորհրդակցական սենյակում:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

Վերլուծելով սույն որոշման մեջ նշված հանգամանքները վերը նշված նորմերի լույսի ներքո էտրիուրդն արձանագրում է, որ Դատարանի «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը կայացվել է օրենքի պահանջների խախտմամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարծում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Վերոգրյալը հիմք ընդունելով և հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրինականության սկզբունքը, Պալատի խորհուրդը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին հակասող դատական սանկցիայի պայմաններում հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբան Կրոմվել Գրիգորյանի գործողությունների իրավաչափությանը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով էտրիուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17022 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան